Արձանագրություն N 8
ՀՀ ԱՆ «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ համապարփակ GIS՝ աշխարհատեղեկատվական համակարգերի հարթակի նախագծման, ստեղծման, տեղադրման, ուսուցման և աջակցման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի գնահատման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» «Դեկտեմբերի» 2025թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Արմեն Ասլյան
Հանձնաժողովի անդամներ	Մարլեն Ղանդիլյան
	Արմեն Բաղդասարյան
Հանձնաժողովի քարտուղար	Զինա Թովմասյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Գնման ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի գնահատման մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնման ընթացակարգի երկրորդ փուլի հայտերի գնահատման մասին

«ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ փուլի (վերջնական) հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանել 17.11.2025թ. ժամը 12:00-ն: Հայտերի բացման նիստ հրավիրել 2025 թվականի նոյեմբերի 17-ին, ժամը 12:00-ին «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲ ընկերությունում, հասցեն՝ ք.Երևան, Դավթաշեն 25 ա:

«ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Գեովայբ» ՓԲԸ	ՀՀ ք. Երևան 0026, Վիասֆեր Տեխնոպարկ, Արշակունյաց պող. 41, +374 55 206 935, erik.gyulazyan@geo-vibe.com	02836988

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջների համապատասխան: «Գեովայբ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

«ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովը կողմից արձանագրվել է՝

1. Աշխատանքային ռեսուրսներ (Human Resources & Staffing Plan)

«Գեովայբ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված աշխատանքային ռեսուրսները, մասնագիտական կազմը, թիմի կառուցվածքը և ներգրավվածությունը լիարժեք համապատասխանում են տեխնիկական բնութագրի պահանջներին: Աշխատանքային ռեսուրսների ապահովումը համադրում է ինչպես նախագծի իրականացման չափաբաժինը, այնպես էլ պահանջվող տեխնիկական ու մեթոդաբանական կարողությունները կամ համարժեք, կամ կետի համար ներկայացված պահանջներից ավելի լավը:

Հաշվի առնելով ներկայացված թիմի ամբողջականությունը, համապատասխան փորձառությունը և տրամադրված ռեսուրսների բավարար մակարդակը՝ հանձնաժողովը գնահատում է այս բաժինը առավելագույն 30 միավորով:

GIS նախագծի իրականացումն ապահովելու համար տեխնիկական բնութագրով նախատեսված են հստակ Ընդունման չափանիշներ (Acceptance Criteria) և դրանց համապատասխանող Ապացույցներ (Evidence), որոնք սահմանում են՝ ինչ է համարվում ավարտված աշխատանք, ինչպես է գնահատվում դրա որակը, և ինչ փաստաթուղթ կամ արդյունքն է հաստատում դրա իրականացված լինելը:

«Գեովայբ» ՓԲ ընկերության ներկայացրած տեխնիկական առաջարկի ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ տեխնիկական բնութագրի լավարկմն առաջարկների մեծ մասը համարժեք են տեխնիկական բնութագրի պահանջներին, իսկ մի շարք դեպքերում նույնիսկ գերազանցում են տեխնիկական բնութագրում նշված նվազագույն չափորոշիչները: Ուստի համարում ենք, որ ներկայացված կմաղքային (skeleton) և բարձր մակարդակի (high-level) լուծումները լիովին իրագործելի են առաջին՝ պլանավորման և հաստատման փուլում:

Տեխնիկակն բնութագիրը նախատեսում է, որ յուրաքանչյուր «Առաջադրանքի առարկայական արդյունք» / «Մատուցվող արդյունք» (Deliverable) պետք է ունենա հստակ ձևակերպված պահանջ, չափելի և ստուգելի ավարտական արդյունք, ինչպես նաև հաստատման համար անհրաժեշտ ապացույցների ամբողջական ցանկ: Փուլ 1-ը նախատեսված է կմաղքային (skeleton) լուծումները լիարժեք, ստանդարտացված և ընդունման համար պատրաստ փաստաթղթերի վերածելու համար:

«Գեովայբ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բաղադրիչները ներառում են տեխնիկական բնութագրով պահանջված հիմնական մեխանիզմները՝ Correspondence Governance, Sizing/Topology, OAuth2/OIDC, Rate Limiting, Error Catalog, ICD Pack, Data Contract, Architecture կմաղքային (skeleton), Training կմաղքային (skeleton) և այլն: Այս բաժինները կամ ամբողջությամբ համարժեք են տեխնիկական բնութագրին, կամ գերազանցում են տեխնիկական բնութագրի տրամադրած նվազագույն չափորոշիչները:

Ուստի հաշվի առնելով տեխնիկական բնութագրի՝ Փուլ 1- ձևակերպված է որպես մեթոդաբանական մշակման փուլ, որի ընթացքում մատակարարը պետք է ներկայացնի ամբողջական ճարտարապետական փաթեթ, ինտեգրացիոն պայմանագրեր, տվյալների կառավարման մեթոդաբանություն, KPI-ներով dashboards-ի wireframe-ներ, անվտանգության քաղաքականություններ և դասընթացների ամբողջական նյութեր: «Գեովայբ» ՓԲԸ-ի առաջարկի կմաղքային (skeleton) հատվածները լիովին համատեղելի են: Հետևաբար տեխնիկական բնութագրում սահմանված ընդունման չափանիշները և դրանց ապացույցները ամբողջությամբ իրագործելի են նախագծի առաջին՝ պլանավորման փուլում: «Գեովայբ» ՓԲԸ-ի ներկայիս skeleton և high-level առաջարկները լիարժեք հիմք են տեխնիկական բնութագրում հաստատված և ավարտական չափանիշներ (Gate/Exit) փուլում անհրաժեշտ ամբողջական փաթեթի ձևավորման համար:

Գնահատող հանձնաժողովը լավացումը գնահատում է բավարար՝ 33 միավոր:

Մասնակցի տեխնիկական ընդհանուր առաջարկը գնահատվում է՝ 63 միավոր:

Հաշվի առնելով նախագծի իրագործման կարևորությունն ու մասշտաբայնությունը՝ ինչպես նաև այն հանգամանքը, որ տեխնիկական առաջարկների գնահատման փուլում չի կարող արտացոլվել նախատեսվող իրականացման բոլոր հնարավոր տեխնիկական առանձնահատկությունների ամբողջական պատկերը, արձանագրում ենք, որ եթե հետագա փուլում առաջանա որևէ տեխնիկական անհնարինություն կամ անհրաժեշտություն՝ գործընթացների հստակեցման, ճշգրտման կամ մեթոդաբանական համապատասխանեցման, ապա դրանց իրականացումը կկատարվի ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 56-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ որպես տեխնիկական ճշգրտում կամ լավացում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը

«ՀՀԱՆՇՕԾ-ԵՄԾՁԲ-2025/1» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ փուլի գնային առաջարկի բացման և գնահատման օրը սահմանել 11.12.2025թ. ժամը 10:30-ն «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲ ընկերությունում, հասցեն՝ ք.Երևան, Դավթաշեն 25 ա:

Հանձնաժողովի նախագահ _____ Արմեն Ասլյան

Հանձնաժողովի անդամներ _____ Մարլեն Ղանդիլյան

_____ Արմեն Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Զինա Թովմասյան